

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԺԸ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԸ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

Նախամուտ

Այս տարի, աշնանը, հանդիսավորությամբ և լայնորեն նշվելու է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միավորման 150-ամյակը, որպես հայ և ռուս ժողովուրդների եղբայրության և անխախտ միասնության տոն:

Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն էր մեր ժողովրդի ժամանակակից պատմության մեջ, երբ 1828 թվականի փետրվարի 10/24-ին ռուս-պարսկական պատերազմից հետո Թուրքմենչայի դաշնադրությամբ Արևելյան Հայաստանի հայությունը կանգնեց եկեղեցական-մշակութային, հասարակական և տնտեսական զարգացման մի նոր ուղու վրա՝ ազատվելով պարսկական դարավոր տիրապետության դաժան և բռնակալ լծից:

Այս նշանակալից իրադարձությունը միաժամանակ լուսավորել է արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ուղին:

Արևմտահայությունը նույնպես դարերով ձգտել է ազատագրվել թուրքական դարավոր բռնակալության ծանր լծից և Ռուսաստանի հովանավորության ներքո կազմել միասնական մի մեծ ընտանիք արևելահայ իր եղբայրների հետ:

Հայ և ռուս ժողովուրդների հարաբերությունները ունեն խոր հնություն: Այդ հարաբերությունների «առաջին շրջանն ընդգրկում է Կիևյան պետության ժամանակներից մինչև XVIII դարի վերջը, այսինքն Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալը»[1]:

Հայերի և ռուսների հարաբերությունների սկիզբը դրվել է, երբ «XI դ. սելջուկների կողմից Անի քաղաքի գրավումից և

[1] **Զ. Տ. Գրիգորյան,** Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը, Երևան, 1967, էջ 8:

կողոպտումից հետո քաղաքի և նրա բնակչության մի մասը հեռացավ հայրենի երկրից: Անեցիների հետ նաև այլ վայրերից շատ հայեր գնացին և հաստատվեցին Կասպից ծովի հյուսիսային ափերին:

Հետագայում երբ մոնղոլները տիրեցին Հայաստանին, Անիից շուրջ քառասուն հազար գաղթականներ շարժվեցին դեպի Աստրախան և Սարայ քաղաքները: ...Հայկական խոշորագույն գաղթավայրերից մեկը եղել է Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա շրջանը... XIV դարի երկրորդ կեսին հայերի թիվը Ղրիմում հասնում էր մի քանի հարյուր հազարի: Միայն Կաֆա քաղաքում ապրում էին շուրջ հարյուր հազար հայեր:

... Ղրիմում գրված «Հայսմավուրք»-ի գրիչը իր հիշատակարանում հիացմունքով հաղորդում է, թե «Ցայնժամ զօրացաք մեք և բազմացաք և շինեցաք զգեօղ և զգաւառս, իշխանք և ազնուականք ի Ղարապազարէն սկսեալ մինչև ի Սուրխաթ և ի Ֆեոդոսեայ, ի լերինս և ի դաշտս լի արարին վանօրէիք և շինեցաք տունք հարիւր հազար և զեկեղեցիս հազար»[2]:

«Հեռավոր անցյալում հաստատված և գնալով խորացող և ծավալվող հայ և ռուս ժողովուրդների կապերն ու բարեկամությունը պատմականորեն միշտ էլ բարերար նշանակություն են ունեցել հայ ժողովրդի տնտեսական, մշակութային, հասարակական և քաղաքական կյանքի զարգացման համար:

Այդ կապերը և բարեկամական հարաբերությունները պատմական տարբեր ժամանակներում արտահայտվել են տարբեր ձևերով և եղանակներով...»[3]:

Խոր հնություն ունի նաև հայ և ռուս եկեղեցիների հոգևոր-մշակութային հարաբերությունների տարեգրությունը, որը հետագա դարերում նույնպես ավելի զարգացել և ամրապնդվել է, ինչպես նշել է Իր ելույթում Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ռուս եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյակի հանդիսությունների ժամանակ Մոսկվայում, այս տարի մայիսի 26-ին. «Դեռևս հնագույն շրջաններից սկսած Կիևյան Ռուսաստանի օրերից հաստատված են եղել եղբայրական հարաբերություններ մեր երկու քույր եկեղեցիների միջև»[4]:

[2] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 643—644:

[3] **Զ. Տ. Գրիգորյան**, նույնը, էջ 8:

[4] «Էջմիածին» ամսագիր, 1978, № Զ, էջ 5:

Քրիստոնեությամբ պատուեալ մեծափառ եկեղեցին զՌուսաց

Մեր եկեղեցական պատմության մեջ **ռուս եկեղեցու մասին այս առաջին կարևոր և պատմական վկայությանը** հանդիպում ենք Արևելյան վարդապետների պարագլուխ, Սանահին վանքի վանահայր, հայրենասեր, խաչենցի Գրիգոր վարդապետ Տուտեորդու 1178 թվականին Հռոմկլայի Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին (1173—1190) գրած նամակում[5]:

Հայ և ռուս եկեղեցիների հոգևոր, մշակութային առնչությունները արտահայտվել են նաև XII դարում վարքագրական թարգմանական գրականության բնագավառում: Ռուս եկեղեցուն վաղուց ծանոթ են եղել հունարեն թարգմանությամբ մեր Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» Ա և Բ մասերը, այսինքն ս. Գրիգոր Լուսավորչի վարքը և Հռիփսիմյանց կույսերի նահատակության պատմությունը կամ վարքագրությունը[6]: Այդ վարքագրության հիման վրա ռուսական եկեղեցին վաղ ժամանակներից սկսած ամեն տարի սեպտեմբերի 30-ին կատարում է հիշատակը «Մեծ Հայքի եպիսկոպոս, նահատակ ս. Գրիգոր Պարթև Հայոց Հայրապետի»:

Ս. Գրիգոր Լուսավորչի սրբապատկերը զարդարել է ռուսական բազում տաճարների պատերն ու խորանները, ինչպես օրինակ Նովգորոդի մոտ 1165 թվականին կառուցված Սպաս Ներեդիցա վանքի տաճարի որմնանկարների շարքում եղել են ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Հռիփսիմե կույսի նկարները: Ապա դարձյալ Նովգորոդի մոտ, Վոլխով գետի աջ ափին, XII դարում կառուցած Խուտընի վանքի տաճարում նույնպես եղել է ս. Գրիգոր Լուսավորչի սրբապատկերը: 1445 թվականին նույն վանքում կա Խոտընի սյունը՝ կանգնեցված ի պատիվ «Մեծ Հայքի հայոց սուրբ Գրիգորի»: Մոսկվայում սուրբ Վասիլի անվան տաճարի մի խորանը կոչվել է «Գրիգորի Հայոց», այսինքն ս. Գրիգոր Լուսավորչի անունով[7]:

[5] «Արարատ» ամսագիր, 1893, Արշակ Տեր-Միքելյան, ապրիլ, միջին դարերի կաթողիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղության համար. էջ 349:

[6] **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, Ագաթանգեղոս, էջ 157—166: Տես նաև **Արամ Տեր-Ղևոնդյան**, Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Երևան, 1977, աշխարհաբար թարգմանություն՝ ներածականով:

[7] Հայ ժողովրդի պատմություն, նույնը, էջ 652:

Այնուհետև ռուսական հնագույն տարեգրություններում կան բազում կարևոր և հետաքրքրական տեղեկություններ Մեծ և Փոքր Հայքի, Արարատի, Նոյան տապանի, հայ ժողովրդի աստվածաշնչական ծագման, քրիստոնեության ի Հայաստան մուտքի, հանուն իր հավատքի հայ ժողովրդի կրած անլուր նահատակության և չարչարանքների մասին:

Այս բոլորի համար աղբյուր է ծառայել դարձյալ Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» հունարեն թարգմանությունը:

Մեր վարքագրական գրականության գանձերից է հանդիսանում ԺԲ դարի ընկզքներին ռուս եկեղեցու առաջին ազգային սրբերից արքայորդիներ Բորիսի և Գլեբի (այլ անվամբ՝ Ռոմանոսի և Դավթի) վարքագրության հունարենից կատարված թարգմանությունը, որը հետագա տարիներում մտել է մեր բոլոր «Ճայտմատուրք»-ների տարբեր խմբագրությունների մեջ, որոնք կազմվել են թե Կիլիկիայում, թե՛ Արևելյան Հայաստանի վանքերում:

Հավանական է, որ Բորիսի և Գլեբի այդ վարքագրությունը հունարենից թարգմանել է Կիլիկիայի Շուղրի Կարմիր վանքում Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը (1065—1105): Վկայասերը մինչև իր կյանքի վերջը «անխոնջ կերպով շարունակած է իր սիրողական թարգմանությամբ աշխատությունը...», «ի յունաց և յասորոց...» և Կ. Պոլիս եղած ատեն գոհացած է հարկավ իր թարգմանությանց նյութեր և գրվածքներ հավաքել, Հայաստան դառնալեն ետքը թարգմանությանց ձեռնարկելու համար, զի **առեալ զգրեանս** Կ. Պոլսե կմեկներ», ինչպես վկայում է Վարդան պատմիչը[8]:

Քրիստոնեությունը մուտք է գործում Ռուսաստան Կիևյան Ռուսիայի մեծ իշխան Վլադիմիրի օրով, 987—988 թվականներին:

Բորիսը և Գլեբը սույն իշխանի զավակներն էին, որոնք իրենց հոր մահից հետո նահատակվում են իրենց քրիստոնեական հավատքի համար և հանդիսանում՝ ռուսական եկեղեցու առաջին ազգային սրբերը, որոնց հիշատակը ռուս եկեղեցում կատարվում է հունիսի 24-ին:

Հայ և ռուս եկեղեցիների միջև հետագա ժամանակներում էլ ընդհանրապես եղել են հոգևոր, մշակութային բարեկամական հարաբերություններ, փոխադարձում և համագործակցություն:

[8] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, Բ մաս, Կ. Պոլիս, 1914, էջ 1282—1283:

Հայ պետականության անկումից հետո

1375 թվականին Կիլիկիայում հայ պետականության անկումով այս անգամ էլ հայ եկեղեցին ազգային իշխանության բացակայության պայմաններում, օտար տիրապետությունների ներքո, փաստորեն իր ձեռքում է կենտրոնացնում հայ ժողովրդի նաև քաղաքական առաջնորդությունն ու ղեկավարությունը, ինչպես անցյալում նման հանգամանքներում, հայ եկեղեցին «հենց սկզբից իրագործում էր «գործակալութեանն» պաշտոնը, այսինքն իր ձեռքում էր պահում օրենսդրական և դատավորական պաշտոնը»[9]:

«Կաթողիկոսությունը, որպես հայկական եկեղեցու բարձրագույն օրգան, ոչ միայն զգալի դեր է խաղացել հայ ժողովրդի կրոնական գործում, այլև մասնակցել է նրա քաղաքական կյանքին վերաբերող հարցերի լուծմանը, իսկ երբեմն էլ, պատմական դեպքերի բերումով, կատարել է քաղաքական իշխանության առանձին ֆունկցիաներ»[10]:

ԺԴ դարում երբ հայ ժողովուրդը կորցրեց Կիլիկիայում իր «թագավորական կենտրոնական պետականությունը, եկեղեցու այս դերն ավելի ուժեղացավ... Այս երևույթը հնարավորություն տվեց եկեղեցուն, համեմատորեն, ավելի լայն ընդունելու ժողովրդի համընդհանուր քաղաքական շահերը»[11]:

Մանավանդ ԺԵ—ԺԸ դարերում երբ հայ ժողովրդի արևմտյան և արևելյան հատվածները հեծում էին թուրքական և պարսկական ծանր լծի տակ, հայ եկեղեցին արդարությամբ և պատվով կատարեց իր այդ քաղաքական, հայրենասիրական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում:

ԺԵ—ԺԸ դարերը հանդիսանում են մեր ժողովրդի պատմության ամենադաժան և մռայլ ժամանակահատվածները:

Օսմանյան Թուրքիան և Պարսկաստանը հրով ու սրով նվաճել էին մեր երկիրը և բաժան-բաժան արել այն:

Հայությունը տնտեսական հարստահարություններից և քաղաքական ճնշումներից բացի ենթարկվում էր նաև ազգային-կրոնական հալածանքների, ֆիզիկական բնաջրնջման և ձուլումի:

ԺԱ դարի պատմիչ Արիստակես վար-

[9] **Փավստոս Բյուզանդ**, Պատմություն հայոց, Վենետիկ, 1889, էջ 36: Կանոնագիրք հայոց, Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ VIII:

[10] Հայ ժողովրդի պատմություն, նույնը, էջ 599:

[11] Կանոնագիրք հայոց, նույնը, էջ VIII:

դապետ Լաստիվերտցու դառն վկայությունը մեր ժողովրդի ա՛յդ շրջանի մասին վերաբերում էր նաև ա՛յս շրջանին, ԺԵ—ԺԸ դարերին. «Եհաս կատարած կենաց տանս Հայոց... Քանի՞ դառն էր պատմութիւնս և ողբոց արժանի... զի ոչ մի օր կամ միոյ ժամանակի հանդիպեցաք անդորրութեան կամ դիւրութեան, այլ ամենայն ժամանակ աւուրց մերոց լի եղև խռովութեամբ և նեղութեամբ... աշխարհ ամենայն ի խաղաղութեան բնակէ, և մեք գերիք և կալանաւորք, սրակոտոր և տնաւերք, և յընչից կողոպտածք:

Մերս ծանրագոյն և առաւելագոյն է քան զամենայն, անթագաւոր, անիշխան, անտէրունչ և անվերակացու, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և ոչ գոյ ի տեղի մի ապաստանի գտանել մեզ, այլ նուազեալ հնազանդեալ եմք ի ներքոյ թագաւորութեան հեթանոսաց կալ և զաստիկ հարուած գաւազանի նոցա օր ըստ օրէ ընդունել»[12]:

Օսմանյան և պարսկական դաժան տիրապետությունների ժամանակ ԺԷ դարերի Հայաստանի և հայ ժողովրդի հոգևոր, քաղաքական, մշակութային անկման մասին դառն վկայություն կա նաև ժամանակի պատմիչ Առաքել վարդապետ Դավրիժեցու (1590—1670) Պատմության մեջ. «Եհաս կատարած կենաց տանս Հայոց... մարդաբնակ աշխարհն Հայոց թափուր է բնակչաց», գրում է նա:

Դավրիժեցու «Պատմությունը մի համազգային վկայաբանություն է և նահատակություն»[13]:

Հայրենասեր պատմիչը «կսկծալի մորմոքմամբ սրտի,... տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին, և զնուազիլն մերոյս ազգի և զչարութիւն մահմետականաց, զպակասիլն եկեղեցական կարգաց, զաւերն բարձրագահ և քրիստոսաբնակ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի այրէր սիրտ իմ, վասն որոյ յօժարեցայ արձանագրութիւն ւոցին»[14]:

Հայրենասիրությունն էր, որ «թելադրեց Դավրիժեցուն արձանագրել հայրենիքի դժբախտությունը»[15]:

Այսպիսի տխուր և հուսահատ կացության առաջ դարձյալ Մայր Աթոռն էր, որ առաջինը ԺԶ դարի սկզբից մեր ժողովրդի և եկեղեցու պատմության ամենածանր շրջանին, երբ Հայաստանը թատերաբեմ էր հանդիսանում երկու բռնակալ ու հզոր պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի միջև և «մի մեծ մռայլ նստել էր մեր հոգևոր և մտավոր կյանքի վրա, որը «աղետալի հետևանքներ է ունենում մեր ժողովրդի համար ավելի ևս չարաչար քան արաբական, սելջուկյան և թաթարական բռնատիրությունները»[16], հավատարիմ իր պատմական, հայրենասիրական փրկարար առաքելությանը, մտածում էր հայ ժողովրդի ազատության և Հայոց երկրի ազատագրության մասին:

Պետք էր փրկել հայ ժողովուրդը վերջնական անկումից և բռնակալների դաժան լծից.

«Տառապանքների մրրկած ծովի մեջ ծփացող հայ ժողովուրդը գրում է պատմաբան Լեոն, **իր դժբախտ պատմության բերմունքով, ուրիշ առաջնորդ ու հավատարմատար չուներ, բացի հոգևորականությունից: Թե ինչ նշանակություն ուներ մանավանդ Հայոց Ընդհանրական Աթոռ Էջմիածինը... հայերի ազգային զգացմունքի տեսակետից... Առաքել Դավրիժեցին անշուշտ իր ժամանակի ընդհանուր հայկական ազգային դավանանքն է արտահայտում՝ ասելով. «Քանզի ի վերայ ս. Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան», ուստի և շատ կարևոր է այն հարցը, թե շահաբասյան սարսափելի այս սև տարիներում ինչ էր ներկայացնում հայ հոգևորականությունն իբրև բարոյական ուժ, իբրև անսահման հեղինակության տեր առաջնորդ, որ պիտի ազդու դեր ունենար ժողովրդի կրած անհուն տանջանքների մեջ»**[17] (ընդգծումը՝ Ա. Հ.):

Հայ ազատագրական շարժման սկիզբն ու զարգացումը

ԺԴ դարում մեր պետականության վերացումից հետո, երբ Հայրապետական Աթոռն էլ 1441 թվի մայիսին Սսից տեղափոխվել էր իր պատմական ու «բնիկ» վայրը՝ ս. Էջմիածին, առաջինը **Ստեփանոս կաթողիկոս Սալմաստեցին** (1545—1567) էր, որ զբաղվում է հայ ժողովրդի և Հայաստանի ազատագրության հարցով: Նրա օրով Մայր Աթոռում «իբրև համազգային

[12] Պատմութիւն Արիստակէսեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեօք են, Թիֆլիս, 1912, էջ 13: Տես նաև **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 32—43:

[13] **Մանուկ Աբեղյան**, նույնը, էջ 449:

[14] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 667—669:

[15] **Լեո**, Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946, էջ 360—364:

[16] **Մանուկ Աբեղյան**, նույնը, էջ 349:

[17] **Լեո**, նույնը, էջ 266:

բարձրագույն ներկայացուցչություն»[17], 1547-ին գումարվում է Էջմիածնի առաջին գաղտնի ժողովը, որտեղ որոշվում է մի պատվիրակություն ուղարկել Եվրոպա, մասնավոր Վենետիկի հանրապետության մոտ, կաթողիկոսի գլխավորությամբ, 1550 թվականին, օգնություն խնդրելու հայերի և Հայաստանի թշվառ դրության վրա: Վենետիկի հանրապետական կառավարությանը հանձնվում է Վենետիկում խմբագրված նաև մի «աղերսագիր Տէրանց Հայոց», որի «խմբագրությանը անշուշտ մասնակցել է և Ստեփանոս կաթողիկոսը»: Պարզ է, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի «առաքելությունը գերազանցապես բաղաքական էր: Եվ որեմն մենք ունենք մեր առջև ազատագրական շարժման անդրանիկ բայլը, մի շարժման, որ մեր նոր պատմության գլխավոր բովանդակությունն է կազմում»[18]: «Այդ տեսությամբ պարտք կզգանք Սալմաստեցիին նշանավոր և արդյունավոր հիշատակություն մը ընծայել կաթողիկոսներու շարքին մեջ և վերջին դարերու զարթնումին նախահայրը և նախակիզբը ճանչնալ զայն»[19]:

Սալմաստեցին Կ. Պոլիս, Վենետիկ, Հռոմ, Գերմանիա, Լեհաստան, Մոսկվա, Կաֆա այցելելուց հետո, 1551 թվականին վերադարձել է Էջմիածին, «կարևոր արդյունք մը ձեռք չձգած»[20], «առանց որևէ օգնության կամ օգնության խոստում ստանալու»[21]:

Սալմաստեցու ազատագրական շարժումը շարունակում է նրա հաջորդ Միքայել Սեբաստացի կաթողիկոսը (1567—1576), որը Սալմաստեցու հետ խորհրդակցելով մի նոր ժողով է հրավիրում Սեբաստիայում, որտեղ նա մնում էր մի որոշ ժամանակ և ուր որոշվում է նոր դիմում և պատգամավորություն ուղարկել Եվրոպայի պետություններին 1562-ին՝ թուրքական և պարսկական տիրապետություններից ազատվելու համար:

Ժողովին մասնակցում են ավելի հոգևորականներ՝ արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ: Պատգամավորության գլուխ է կանգնում Աբգար Եվդոկիացին կամ Թոխատեցին: «Սեբաստիայի ժողովը նշանավոր է այն կողմից, որ նա ցույց է տալիս, թե ձգտումը դեպի բաղաքական ազատություն միայն արևելյան հայությանը չէր հատուկ, Պարսկաստանի սահմաններում, այլ հավասարապես և արևմտյան հայությանը, որ ապրում էր Օսմանյան տիրապետության տակ»[22]:

Աբգարի առաքելությունը նույնպես որևէ դրական արդյունք չունեցավ: Այդ առաքելության մեջ «ինչպես կտեսնվի եկեղեցական միությունը նպատակ չէ, այլ խաչակիրներու ժամանակին կազմված գաղտփարն է, որ տակավին կտիրե, թե Արևմուտք՝ պապերուն հորդորներուն զորությամբ պիտի զինվի և Արևելք պիտի ազատվի իսլամական տիրապետութենեն, որ բացառաբար կծանրանար հայերու վրա»[23]:

«Սալմաստեցու և Սեբաստացու ձեռնարկումները այն նշանակությունն ունեցան, որ հայերը շուրջ երեք հարյուր տարվա լռությունից հետո նորից բարձրացրին ազատագրական պայքարի դրոշը»[24] Մայր Աթոռի հովանավորությամբ և գլխավորությամբ՝ թոթափելու համար թուրք-պարսկական դաժան լուծը:

Կողմնորոշում դեպի Ռուսաստան

ԺԷ դարի 60-ական թվականներին ռուսական պետության հզորացումն ու ընդարձակումը մեծ հետաքրքրություն են առաջացնում Մայր Աթոռում և հայ ժողովրդի ծոցում հայության ազգային-ազատագրական շարժման բախտը վերջնականապես կապելու Ռուսիայի քրիստոնյա պետության հետ:

Այս նոր բաղաքական կողմնորոշման մեջ մեծ դեր են կատարում նաև Պարսկաստանի հայ առևտրականները, որոնք սենտեական սերտ կապերի մեջ էին Ռուսաստանի հետ:

1659 թվականին Նոր Ջուղայի հայ առևտրականների անունից ռուսաց Ալեքսեյ ցարին նվիրվում է «ալմաստե մի գաւազան», որպես խորհրդանշան հայ և ռուս ժողովուրդների օրավուր զարգացող բարեկամության:

Անցյալի հոգևոր, մշակութային առնչությունները երկու ժողովուրդների միջև և ԺԷ դարում առևտրական-տնտեսական հարաբերությունները հետագայում դարձան ամուր հիմք երկու ժողովուրդների նաև բաղաքական հարաբերությունների:

1668—1669 թվականներին Սպահան է այցելում Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկո-

[18] Նույնը, էջ 187—188:

[19] Նույնը, էջ 189—190: Տես նաև **Հ. Ղ. Ալիշան**, Հայ վենետ, 1898, ս. Ղազար, էջ 325—330:

[20] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը էջ 2240—2244, 2258:

[21] Նույնը, էջ 2243:

[22] Հայ ժողովրդի պատմություն, նույնը, էջ 607:

[23] **Լեո**, նույնը, էջ 194:

[24] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 2253:

[25] Հայ ժողովրդի պատմություն, նույնը, էջ 608:

սը (1654—1680), Մայր Աթոռի վերաբերյալ մի շարք գործերով, և տեսակցություն է ունենում Նոր Ջուղայի համայնքի գլխավորների հետ: Ահա այստեղ է «ծագում ռուսական ցարին խնդրագիր-համակ ուղարկելու միտքը», որով և Ջուղայեցին հանդիսանում է «հայկական ազատագրական շարժման առաջին ոգեշնչողներից մեկը»[26]:

Ջուղայեցին որպես հայրենասեր կաթողիկոս 1678-ին Մայր Աթոռում հրավիրում է խորհրդակցական բնույթի գաղտնի մի ժողով՝ զբաղվելու համար պարսկական լծի տակ ապրող իրավազուրկ և կեղեքված հայ ժողովրդի փրկության հարցով:

Սույն կարևոր ժողովին մասնակցում են վեց բարձրաստիճան հոգևորականներ և վեց իշխաններ:

Շարժման ղեկավարներից մեկն էր նաև ծերունի Պողոշ իշխանը, որը թեև ժողովին ներկա չ՝ր, բայց ուղարկել էր իր որդուն՝ Իսրայել Օրուն, որը հետագայում հանդիսացավ հայ ազգային-ազատագրական շարժման մեծ ու նվիրյալ գործիչներից մեկը:

Էջմիածնի ժողովը որոշում է Եվրոպա դարձյալ ուղարկել մի պատգամավորություն՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ և Իսրայել Օրու ընկերակցությամբ:

1679 թվականին պատգամավորությունը մեկնում է Թիֆլիս՝ «անշուշտ վրաց իշխաններուն հետ ալ տեսակցելով»[27], և խորհրդակցություն է ունենում Գեորգի ԺԱ թագավորի հետ:

Ջուղայեցին Կ. Պոլիս հասնելուց հետո տեսակցություններ է ունենում խորհրդապահաբար, կարևոր մի շարք հայ եկեղեցական և աշխարհական ազդեցիկ անձնավորությունների հետ, գործնական քայլեր առնելու համար իր հայրենասիրական գործի ուղղությամբ:

Ջուղայեցին ութ ամիս մնում է Կ. Պոլսում: Արդեն հիվանդակախ և ծերունազարդ, մահանում է 82 տարեկան հասակում, 1680 թվականի օգոստոսի 2-ին: «Այս անակնկալ հարվածը խորտակում էր սկըսված քաղաքական ձեռնարկությունը»[28]: Ջուղայեցու մահից հետո պատգամավորության անդամները հուսահատ վերադառնում են Էջմիածին: Միայն Իսրայել Օրին շարունակում է իր ճանապարհը Եվրոպա, ի խնդիր հայկական-ազատագրական շարժման հաջողության: Օրին «անցավ Արևմուտք, ուր և անհետացավ երկար ժամանակ: Այս նշանակում էր, թե սկսած գործը վերջնականապես չէր մեռնում, այլ ժամանակավոր դադար էր առնում»[29]:

Հակոբ Ջուղայեցին արդարորեն համարվում է ԺԷ դարի հայ ազատագրական շարժման ոգեվիրան: Նա որպես «նախանձաճուկ եկեղեցական, նախանձախընդիր հայրապետ մը ըլլալով հանդերձ, իր մտադրությունը կսևեռե ոչ միայն կրոնական և կրթական բարեկարգությանց վրա, այլ ուշադրություն կդարձնե ազգային ապագային վրա և անոր կենցաղական և քաղաքական վիճակն ալ իր ջանքերուն առարկա կընե»: Եվ այս գաղափարներն էլ «գրավեցին Հակոբի միտքը»[30]:

Ջուղայեցին «հանդիսացավ գլուխ և ոգի մի նշանավոր քաղաքական ձեռնարկության, որից ծնունդ պիտի առներ հայ ժողովրդի ազատագրական մեծ և դարավոր շարժումը: Միայն այս հանգամանքը բավական է, որ Հակոբ Ջուղայեցին դասվի Հայաստանի անվանի երախտավորների շարքում»[31]:

Ջուղայեցու մահից հետո «հայոց կրոնական համազգային կենտրոնը պիտի խոշոր դեր կատարեր այն քաղաքական ձեռնարկության մեջ որ սկսված էր Արևմուտքում: Հակոբ կաթողիկոսի ընդունած ծրագիրը մնացել էր նրա հաջորդներին... Հակոբի անմիջական հաջորդ Եղիազարը նույնպես փորձել է գնալ Արևմտյան Եվրոպա, բայց ստիպված է եղել վերադառնալ» ժամանակի խառնակ կացության պատճառով[32]:

Եվրոպայում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, շուրջ 20 տարի մնա-

---

[26] Նույնը, էջ 655—656:

[27] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 2611:

[28] **Լեո**, նույնը, էջ 348:

[29] Նույնը, էջ 349:

[30] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 2619:

[31] **Լեո**, նույնը, էջ 324:

[32] **Լեո**, նույնը, էջ 520: «Եղիազարը կրնար համարձակ բարեկամական հարաբերություններ մշակել, Արևմտյանները շահելու և անոնց միջնորդությամբ հայության լավագույն կացություն մը հոգալու նպատակով» (Օրմանյան, նույնը, էջ 2659): «Եղիազար Այնթապցին... հակաէջմիածնական չէր... Նա դարձյալ և միշտ հայկական եկեղեցու և Էջմիածնի Մայր Աթոռի շահերին էր ծառայում». **Հ. Ս. Անասյան**, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, էջ 248:

Եղիազար Այնթապցին (1682—1691) համարվում է արևմտահայության ազատագրական շարժման կարևոր գործիչներից մեկը: Տես այս մասին «Եղիազար Այնթապցին և Եղիազարյան շարժումը», **Հ. Ս. Անասյան**, նույնը, էջ 241—319:

ցել է Օրին և 1645-ին հաստատվել Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքում, ուր և սկզբնական շրջանում զբաղվել է առևտրով, և ծանոթացել Պֆալցի Կուրֆյուրստ (կայսրընտիր) Հոլհան Վիլհելմին և նրան խանդավառել ու «շահագրգռել Հայաստանի ազատագրության համար օգնություն կազմակերպելու նախաձեռնությունն ստանձնելու խնդրում»[33]: Սակայն, Վիեննայում Իսրայել Օրուն «խորհուրդ տվին դիմել Ռուսիայի օգնության», թե՝ «առանց ռուսաց թագավորի համաձայնության և աջակցության չի կարելի զորք ուղարկել Սասունից ծովի ափերը: Հասկացրին, որ հայերի ազատագրական գործին իրական օգնություն կարող է ցույց տալ Պետրոս Ա-ը, և նա, (Օրին) Արևմուտքից հույսը կտրած, իր ընկերոջ՝ Մինաս վարդապետի (Տիգրանյան) հետ ճանապարհ ընկավ դեպի Ռուսաստան»[34] 1701 թվականի գարնանը:

Ուրեմն հայ ազատագրական շարժման երկարատև փորձերից հետո գտնվեց միակ և ճիշտ ճանապարհը, ամբողջովին շրջադարձ դեպի Ռուսաստանը: «Դեռևս սակայն այդ կողմնորոշումը ընդհանուր ճանաչում չէր գտել»[35]: Բայց, հայ ազատագրական շարժման կենտրոնը Եվրոպայից փոխադրվում է Ռուսաստան:

Հակոբ Ջուղայեցուց հետո նրա հայրենասիրական-ազատագրական գործունեությունը շարունակում է նաև **Հակոբ Ե Շամախեցի կաթողիկոսը** (1759—1763). «Այն ձեռնարկը զոր Օրի զինվորականը և Մինաս վարդապետը այնչափ խնամքով մշակած էին, ռուսական պետության պաշտպանությամբ Մայր Աթոռը պարսկական անտանելի լուծեն ազատելու, բավական ժամանակ ի վեր մոռցված էր... Շամախեցին է որ նորեն այդ գաղափարը կենդանացրեց, 1760 հուլիս 20-ին Ռուսիո Եղիսաբեթ կայսրուհուն գրած նամակովը որով կխնդրե **հայ ռոդոմելի ժողովուրդին և վրաց մասին հոգացություն ունենալ...** Շամախեցիով նորոգված այդ սկզբնավորությունն է որ հաջորդներուն օրով հետզհետե մշակվեցավ և աճեցավ և վերջապես արդյունավորվեցավ 70 տարի թեպետև հետավորությամբ»[36]:

Շամախեցու վերոհիշյալ նամակը անձամբ Պետերբուրգ է տանում վրաց թեյմուրազ թագավորը: «Աղաչանք և պաղատանք երկու բախտակից ազգերի փրկության համար,—գրում է Լեոն այս առթիվ,—այս դիմումը չափազանց թանկագին մի վավերագիր է ազգերի համերաշխության և եղբայրակցության վեհ գաղափարների տեսակետից: Սրտառուչ է, որ մի տանջված ազգի ներկայացուցիչ խնդրում է մի ուրիշ ազգի համար... որը գտնվում էր նեղ դրության մեջ և վտանգված էր տեսնում իր գոյությունը: **Այսպիսով նորից դրվում էր հայոց հարցը և այս անգամ դնողն արդեն Ամենայն Հայոց կաթողիկոսն էր ... Շամախեցին հայոց հարցի պատմության մեջ մտցնում էր, այսպես ասած, Էջմիածնական շրջանը, որ իրեն բաղաքական շարժում այն հիմնական տարբերությունը ուներ մինչև այդ գործած Գանձասարյան շրջանից, որ նա Գանձասարի նման հայ ժողովրդի ազատագրությունը չէր հիմնում հայերի ապստամբության վրա, այլ հասկանում էր հայոց հարցը այն մտքով, թե հայերին պիտի ազատի մի երևելի ուժեղ պետություն, ամենից շուտ՝ Ռուսիան»**[37]:

Քաղաքական այս նոր և ճիշտ կողմնորոշման մեջ առաջինը **Սիմեոն Երևանցի հայոց մեծագործ կաթողիկոսն** (1763—1780) էր, Շամախեցու հաջորդը, որը վրդնականորեն և համարձակությամբ մտածում էր և գիտակցում, որ քրիստոնյա Ռուսաստանն էր այն միակ հուսալի ուժը, հզոր պետությունը, որը կարող էր հաջո-

---

[33] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 662:

[34] Նույնը, էջ 555:

[35] Հայ ժողովրդի պատմություն, նույնը, էջ 667: Տես նաև **Լեո**, «Գանձասարի մոտ գտնվող ս. Հակոբ վանքի վանահայր Մինաս վարդապետ Տիգրանյանը նույնպես համարվում է հայ ազատագրական շարժման նուանդուն գործիչներից մեկը, որպես Իսրայել Օրու գաղափարակից: Նա իր անունը կապեց Օրիի հետ իրեն հայ ազգի պատգամավոր, օտար տերություններից օգնություն, ազատություն խնդրելու և կշարունակեր դիմումներ անել, խնդրանքներ ուղղել բացառապես ռուս կառավարությանը, որն այսպիսով դառնում էր Հայոց հարցի միակ տնօրենը» (**Լեո**, նույնը, էջ 524—589):

Տես նաև **Հ. Ս. Անասյան**, նույնը, էջ 6: «XVII դարն այն շրջանն էր, երբ հայ-ռուսական հարաբերություններով **տակավին** հող էր պատրաստվում հայ ազատագրական ռուսական կողմնորոշման համար և **միայն** XVIII դարի սկզբներին է, որ Ռուսաստանը դարձավ հայերի ազատագրական հույսերի հիմնական խարիսխը»: Քաղաքական այս նոր կողմնորոշման մեջ ի հարկն վճռական դեր կատարեց նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

[36] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 3018: Շամախեցու նամակի բովանդակության մասին տես **Լեո**, նույնը, էջ 768—769:

[37] **Լեո**, նույնը, էջ 769—770:

ղությամբ պսակել հայ ժողովրդի ազգային-ազատագրական հույսերը:

Դեպի Հայաստան և հայ ժողովուրդը ռուսական արքունիքի հետաքրքրությունը զգալի չափով պայմանավորված էր նաև ցարական կառավարության արևելյան քաղաքականությամբ:

Այսպիսով Սիմեոն Երևանցին դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հիմքը և հայ ժողովրդի ազատությունը կապեց Ռուսաստանի հետ՝ հրաժարվելով արևմտյան կողմնորոշումից:

Սիմեոն Երևանցին շարունակում է իր նախորդների՝ Հակոբ Ջուղայեցու և Հակոբ Շամախեցու հայրենասիրական գործունեությունը[38] և հանդիսանում է ԺԸ դարի մեր ազգային ազատագրական շարժման բացառիկ դեմքերից մեկը, որը սերտ կապ է հաստատում ռուսական արքունիքի հետ և թանկագին մասունքներով և նվերներով 1766 թվականի օգոստոսի 1-ին Պետերբուրգ է ուղարկում Դավիթ վարդապետի գլխավորությամբ պատգամավորություն, և այս առթիվ «գրեաց զթուղթ աղերսանաց առ աստուածազօր կայսրուհին Ռուսաց Եկատերինէ»[39], Ռուսաստանի ցիրուցան համայնքներից մի թեմ կազմելու և Էջմիածնի կանոնական իրավասության տակ դնելու համար Ռուսաստանում ապրող բովանդակ հայությունը: «...Երևանցին Դավիթ վարդապետին ուրիշ հանձնարարություններ և խնդիրներ էր արել, որոնք վերաբերում էին հայերի դրության»[40]:

Կայսրուհին պատասխանում է 1768 թվականի հուլիսի 30-ին Երևանցու նամակին Ս. Էջմիածնի թեմ էր հայտարարում Ռուսաստանի թեմի հայ համայնքներին և արքայական նվերներով մի հրովարտակ ուղարկում նրան, «Հայոց հավատարիմ ազգը» առնելով իր կայսերական, հատուկ «ողորմութեան և հովանաւորութեան և շնորհաց ներքո»: Հրովարտակում խոսվում է նաև «հայոց ազգը հուսադրած մշտատև ողորմության և շնորհաց շարունակության մասին»[41]:

«Այս թվականը կրնանք նկատել իբր հիմն և արմատ այն սերտ հարաբերության, որ հաստատվեցավ հայոց կաթողիկոսության և ռուսաց կայսրության մեջ, և որ հառաջանալով և աճելով հանգեցավ ռուսական տիրապետության Հայաստանի մի լավ մասին և հայության մի լավ կեսին վրա»[42] (ընդգծումը Ա. Հ.):

«Երևանցին այս առիթով, ի նշան երախտագիտության դեպի Ռուսաստանը «կայսերական այս մեծահոգության և ուշադրության դիմաց», սահմանում է կայսերական մասնավոր մաղթանք՝ «Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց»-ը, 1771 թվականի հուլիսի 10-ին՝ նշելով, որ կայսրուհու «հովանաւորութեամբ ազգս մեր կեայ լաւապէս և պահպանութեամբ նորին կենցաղավարի ապահով և աներկիւղ յամենայն թշնամեաց»: Կայսրուհին, «Ամենայն Հայոց զսուրբ Էջմիածինն պսակեալ փառաւորեաց և զազգս հայոց՝ իւրոյ ամենապատուական թագաւորութեան սիրելի և իւրային արձանագրեաց»: Երևանցին հաստատում է, որ այս բացառիկ շնորհների՝ «գերազանց բարերարութեան ոչ ինչ կարէաք հատուցանել զփոխարէնն, վասն որոյ զայս քան բանս շարադրեցաք... և կանոնացաք զի ազգս հայոց որքան գոն ընդ օրհնեալ տէրութեամբ նոցին... եկեղեցականք և աշխարհականք մեծաւ հանդիսութեամբ կատարեսցեն զայս կարգ»[43]:

Սիմեոն Երևանցու սահմանած կայսերական մաղթանքի սույն կարգը անխափան շարունակվում է Արևելյան Հայաստանի, Կովկասի և Ռուսաստանի հայկական բոլոր եկեղեցիներում, մինչև 1917 թվականի փետրվարյան բուրժուական հեղափոխությունը:

«Բացատրել այս խոշոր հավատարմական ցույցը միայն նրանով, թե Ռուսաստանի հայերի առաջնորդական հարցը հաջող լուծում է ստացել՝ անկարելի է: Մենք նկատի պիտի առնենք և այդ ժամանակի քաղաքական հանգամանքները, որոնք վերաբերում էին հայերի դրության»[44]:

Երևանցին հայրենասիրական նպատակներով, ջերմ և մտերմիկ հարաբերություններ է պահում նաև Մոսկվայի, Պետերբուրգի, Աստրախանի ռուս միտրոպոլիտների հետ: 1779 թվականի ապրիլի 10-ին Մոսկվայի Պլատոն Պատրիարքը Երևանցուն ուղղած իր նամակում բարեմաղթում է, որ Աստված «իսպառ եղծէ զծանրացեալ ի վերայ ձեր լուծ բռնութեան և ազգին հայոց դարձուսցէ զնախկին փառս իւր,

---

[38] Նույնը, էջ 772:

[39] **Եփրեմ Ջորագեղցի**, Ցիշատակարան, «Ադարատ», 1896, էջ 497:

[40] **Լեո**, նույնը, էջ 772—773:

[41] Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ ՃԻԱ—ՃԼԱ:

[42] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 3057:

[43] Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց, ս. Էջմիածին, 1915, «Յառաջաբանութիւն հեղինակի»: Տես նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան, 1972, էջ 197:

[44] **Լեո**, նույնը, էջ 773:

զվշտացեալն քրիստոնէութիւն ուրախացուցէ ազատութեամբ»:

Քրիստոնյա Ռուսաստանը այդ օրերին հանդես էր գալիս ճնշված քրիստոնյա ժողովուրդների ազատարարի հանգամանքով: 1769 թվականին Բալկանյան երկրներում և Վրաստանում տարածվում էին կայսրուհու կոչերը, որոնցով քրիստոնյա ժողովուրդները հրավիրվում էին ապստամբության: Կայսրուհին «ամենադրական կերպով խոստանում էր քրիստոնյաներին ազատություն անհավատների լծից: Մյուս կողմից Ռուսաստանը պատրաստվում էր պատերազմի Թուրքիայի դեմ: Մեծ հույսեր էին ծնվում Արևելքի տառապող քրիստոնեության համար, և հայերը չէին կարող անմասն մնալ այդ հույսերի մեջ»[45]:

Սիմեոն Երևանցին 1773 թվականին իր աշակերտ արքեպիսկոպոս Արղությանին նշանակում է Ռուսաստանի հայոց առաջնորդ: «Այս էլ մի շատ խոշոր քաղաքական քայլ էր... Ռուսաստանում Արղությանը մի սարա առաջնորդ չէր, այլև քաղաքական մի նշանավոր գործիչ, որն անագին դեր կատարեց 18-րդ դարի վերջին քառորդին հակական շարժումների մեջ»[46]:

Սիմեոն Երևանցին մահանում է 1780 թվականի հուլիսի 26-ին և թաղվում ս. Գայանե վանքում:

Երևանցու մահը մեծ կորուստ էր և՛ հայ եկեղեցու, և՛ մանավանդ ազգային-ազատագրական շարժման համար:

Երևանցին իր կյանքով, մատենագրական վաստակով և հայրենանվեր գործունեությամբ, 17-ամյա հայրապետական իր գահակալությամբ հանդիսանում է ԺԸ դարի մինչև 80-ական թվականները գալն վեհ և ընտիր հոգիներեն մին, որ իրենց արթուն մտքով, լուրջ ջանքերով և անխոնջ աշխատասիրությամբ տիպար գործիչը կկազմեն և իրենց ժամանակի տիրապետող դեմքը կդառնան»[47]: Երևանցու «Բազմարդյուն գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում նրա հայրենասիրական գործունեությունը, մանավանդ պաշտպան հանդիսանալ իր ժողովրդին»:

Երևանցին «ամենայն իրավունքով կարող է համարվել ամենախոշոր անձնավորությունը 18-րդ դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ»[48]:

Սիմեոն Երևանցին մահացավ: Բայց չդադարեցրեց հայ ազատագրական շարժումը: Այն մեծ արդյունավորությամբ շարունակեց 1780—1800 թվականներին Երևանցու աշակերտ և գաղափարակից, Մայր Աթոռի միաբան և Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, որի հայրենասիրական, քաղաքական գործունեության մասին կխոսվի «Էջմիածին» ամսագրի հաջորդ համարում:

(Շարունակելի)

[45] **Լեո**, նույնը, էջ 773:

[46] Նույնը, էջ 773:

[47] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, նույնը, էջ 3122:

[48] **Լեո**, նույնը, էջ 770: